ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ
ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ
ԷՐԵԲՈՒՆԻ ՆՍՏԱՎԱՅՐ
(ՀՀ, համայնք ԵՐԵՎԱՆ, ԷՐԵԲՈՒՆԻ, ԽՈՐԵՆԱՑՈՒ Փ., մասնաշենք 162Ա)

ՈՐՈՇՈՒՄ

հայցադիմումը վարույթ ընդունելու և
պատասխանողից ապացույցներ պահանջելու մասին

ԵԴ2/3118/02/24 ք. Երևան
29 Ապրիլի 2024թ

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանը՝ նախագահությամբ դատավոր Արշակ Պետրոսյանի, ծանոթանալով «Ագաստ» ՍՊ ընկերության ընդդեմ «Մեղրու տարածաշրջանային բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի՝ «Մեղրու տարածաշրջանային բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի և «Ագաստ» ՍՊ ընկերության միջև 04.01.2024 թվականին կնքված թիվ «ՄՏԲԿ-ԳՀԱՊՁԲ-24/1-3» և 10.01.2024թ.-ին կնքված թիվ «ՄՏԲԿ-ԳՀԱՊՁԲ-24/2-3» ծածկագրերով պայմանագրերի միակողմանի լուծումն անվավեր ճանաչելու պահանջի մասին հայցադիմումին.

ՊԱՐԶԵՑ

«Ագաստ» ՍՊ ընկերության ներկայացուցիչը դատարան է ներկայացրել հայցադիմում ընդդեմ «Մեղրու տարածաշրջանային բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի՝ «Մեղրու տարածաշրջանային բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի և «Ագաստ» ՍՊ ընկերության միջև 04.01.2024 թվականին կնքված թիվ «ՄՏԲԿ-ԳՀԱՊՁԲ-24/1-3» և 10.01.2024թ.-ին կնքված թիվ «ՄՏԲԿ-ԳՀԱՊՁԲ-24/2-3» ծածկագրերով պայմանագրերի միակողմանի լուծումն անվավեր ճանաչելու պահանջի մասին, որը Դատարանին հասանելի է դարձել 23.04.2024թ.:

Հայցադիմումը ներկայացված է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 120-122 հոդվածների պահանջներին համապատասխան:
Հայցադիմումի ընդունումը մերժելու կամ հայցադիմումը վերադարձնելու հիմքեր չկան:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ Հայցադիմումը վարույթ ընդունելու հետ միաժամանակ դատարանը կայացնում է որոշում՝ պատասխանողից տվյալ գնման գործընթացի հետ կապված պատասխանողի տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները պահանջելու մասին:
Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Ապացույցներ պահանջելու վերաբերյալ որոշումը կատարվում է պատասխանողի կողմից որոշումն ստանալուց հետո՝ հնգօրյա ժամկետում:
Նույն մասով նախատեսված ժամկետում պատասխանողի կողմից ապացույցներ պահանջելու վերաբերյալ որոշման պահանջները չկատարվելու դեպքում գործը քննվում է դրանում առկա ապացույցների հիման վրա, իսկ հայցվորի վկայակոչած այն փաստերը, որոնք ենթակա են հաստատման պատասխանողի տիրապետման տակ գտնվող ապացույցներով, համարվում են հաստատված:
ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.10-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վիճարկվող գործողությունների (անգործության) և որոշումների հիմքում ընկած հանգամանքների, ինչպես նաև տվյալ գործողությունների (անգործության) կատարման և որոշման ընդունման օրենքով, այլ իրավական ակտերով սահմանված կարգը պահպանված լինելու փաստերն ապացուցելու պարտականությունը կրում է պատասխանողը: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ պատասխանողը վիճարկվող գործողությունների (անգործության) և որոշումների իրավաչափությունը հիմնավորող ապացույցներ կարող է ներկայացնել միայն ապացույցները պահանջելու որոշման կատարման ընթացքում, բացառությամբ այն դեպքերի, երբ հիմնավորում է ապացույցի ներկայացման անհնարինությունը իրենից անկախ պատճառներով:
Վերոնշյալ հոդվածների իրավակարգավորումներից ելնելով՝ Դատարանը գտնում է, որ «Մեղրու տարածաշրջանային բժշկական կենտրոն» ՓԲԸ-ից պետք է պահանջել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.6-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված՝ թիվ «ՄՏԲԿ-ԳՀԱՊՁԲ-24/1-3» և թիվ «ՄՏԲԿ-ԳՀԱՊՁԲ-24/2-3» ծածկագրերով գնման գործընթացի հետ կապված պատասխանողի տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները:
Միևնույն ժամանակ Դատարանը հարկ է համարում պարզաբանել, որ պատասխանողը կարող է ներկայացնել թիվ «ՄՏԲԿ-ԳՀԱՊՁԲ-24/1-3» և թիվ «ՄՏԲԿ-ԳՀԱՊՁԲ-24/2-3» ծածկագրերով գնման գործընթացի հետ կապված ապացույցներ միայն ապացույցները պահանջելու որոշման կատարման ընթացքում, բացառությամբ այն դեպքերի, երբ հիմնավորում է ապացույցի ներկայացման անհնարինությունը՝ իրենից անկախ պատճառներով:

Ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 124, 125, 199-200, 234.5 հոդվածի 2-րդ, 234.9-րդ հոդվածի 1-ին և 4-րդ հոդվածներով՝ Դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. «Ագաստ» ՍՊ ընկերության ընդդեմ «Մեղրու տարածաշրջանային բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի՝ « «Մեղրու տարածաշրջանային բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի և «Ագաստ» ՍՊ ընկերության միջև 04.01.2024 թվականին կնքված թիվ «ՄՏԲԿ-ԳՀԱՊՁԲ-24/1-3» և 10.01.2024թ.-ին կնքված թիվ «ՄՏԲԿ-ԳՀԱՊՁԲ-24/2-3» ծածկագրերով պայմանագրերի միակողմանի լուծումն անվավեր ճանաչելու պահանջի մասին հայցադիմումն ընդունել վարույթ:
2. Որոշումը սահմանված կարգով ուղարկել գործին մասնակցող անձանց և «Գնումների

մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված լիազորված մարմնի պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեին:
3. Թիվ ԵԴ2/3118/02/24 քաղաքացիական գործով եզրափակիչ դատական ակտը հրապարակել ՀՀ դատական իշխանության պաշտոնական կայքում՝ 2024թ. հունիսի 13-ին:
4. «Մեղրու տարածաշրջանային բժշկական կենտրոն» ՓԲԸ-ից պահանջել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.6-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված՝ թիվ «ՄՏԲԿ-ԳՀԱՊՁԲ-24/1-3» և թիվ «ՄՏԲԿ-ԳՀԱՊՁԲ-24/2-3» ծածկագրերով գնման գործընթացի հետ կապված պատասխանողի տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները:
5. Ապացույցներ պահանջելու վերաբերյալ սույն որոշման 4-րդ կետի պահանջները պատասխանողի կողմից ենթակա է կատարման որոշումն ստանալուց հետո՝ հնգօրյա ժամկետում:
4. Որոշումն ուժի մեջ է մտնում կայացման պահից և բողոքարկման ենթակա չէ:

Դատավոր՝ Digitally signed by PETROSYAN ARSHAK 1303730265 **Արշակ Պետրոսյան**

Տվյալ ֆայլերին կարող եք ծանոթանալ նաև մուտք գործելով "Էլեկտրոնային դատավարություն" համակարգ՝ cabinet.armlex.am